

## ԳԼՈՒԽ 1 Ընդհանուր դրույթներ

### Հոդված 1. Պետական վիճակագրության մասին օրենսդրությունը

Պետական վիճակագրության մասին օրենսդրությունը կազմված է սույն օրենքից և այլ իրավական ակտերից

### Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողությունը տարածվում է իրավաբանական անձանց, օտարերկրյա իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական մարմիններ չհանդիսացող պետական հիմնարկների (այսուհետ՝ պետական հիմնարկներ), ինչպես նաև քաղաքացիների (վիճակագրական տեղեկություններ տրամադրողներ) վրա:

### Հոդված 3. Պետական վիճակագրությունը

Պետական վիճակագրությունը պետական վիճակագրություն իրականացնող մարմնի և նրա ստորաբաժանումների կողմից վարվող գործունեությունն է՝ պետական վիճակագրական աշխատանքների եռամյա և տարեկան ծրագրերին համապատասխան:

### Հոդված 4. Պետական վիճակագրության հիմնական խնդիրները

Պետական վիճակագրության հիմնական խնդիրներն են՝

ա) տնտեսական և հասարակական գործընթացների ու դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց, պետական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև հանրությանը սահմանված կարգով տեղեկատվությամբ ապահովումը.

բ) միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշներին համապատասխան վիճակագրության միասնական մեթոդաբանության ապահովումը.

գ) պետական վիճակագրական ռեգիստրի վարումը.

դ) վիճակագրական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչների վարումը.

ե) վիճակագրական տեղեկատվական աղբյուր հանդիսացող փաստաթղթերի ձևերի մշակման համակարգումը.

զ) միջգերատեսչական տեղեկատվական ռեսուրսների համադրելիության նպատակով, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում նշված կազմակերպություններին<sup>ա</sup> վիճակագրական տեղեկատվության սեփական բազաներ ստեղծելուն աջակցությունը:

Հոդված 5 . Պետական վիճակագրությանը ներկայացվող պահանջները

Պետական վիճակագրությանը ներկայացվող պահանջներն են՝

- ա) վիճակագրության օբյեկտիվությունը, հիմնավորվածությունը, անաչառությունը.
- բ) վիճակագրական տվյալների արժանահավատությունը, ճշտությունը, համադրելիությունը ժամանակի և տարածության մեջ, անանունությունը.
- գ) վիճակագրական տեղեկատվության արդիականությունը, կայունությունը և ամբողջականությունը.
- դ) միջազգայնորեն ընդունված վիճակագրական չափանիշների և նորմերի հետ համադրելիությունը.
- ե) միջազգայնորեն ընդունված ազգային հաշիվներին վիճակագրական ցուցանիշների համապատասխանությունը.
- զ) վիճակագրական ամփոփ տվյալների պարբերական հրապարակումը.
- է) վիճակագրական տեղեկատվության մատչելիությունը, հրապարակայնությունը: